ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻՆ

07.02.2014 08:40

N 126, 07.02.2014թ.

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ՝

պարոն Վ.Շահինյանին

Հարգելի պարոն Շահինյան,

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչի պաշտոնակատար Վ.Գ.Ավետիսյանը 03.02.2014թ. «Հարցաքննության կանչելու մասին» ծանուցագիր է ուղարկել փաստաբան Թամարա Մալխասյանին՝ հրավիրելով նրան որպես վկա այսօր ժամը 17.00-ին: Ծանուցագրում նշվել է, որ Թամարա Մալխասյանը հրավիրվում է ՀՀ ՀՔԾ-ում խարդախության դեպքերի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցված քրեական գործով:

Հեռախոսազրույցի ընթացքում, որպես քննիչ հանդես եղած Վ.Ավետիսյանը Թամարա Մալխասյանին տեղեկացրել է, որ քրեական գործն առնչվում է տուժող Անահիտ Ռուբենի Սահակյանին, որի հաղորդման հիման վրա հարուցվել է քրեական գործը: Նկատի ունենալով այն, որ Թամարա Մալխասյանը ներկայացրել է Անահիտ Սահակյանի շահերը քաղաքացիական գործերով, նա հրավիրվել է այդ գործերից մեկի հետ կապված որոշ տեղեկություններ ճշտելու համար:

Գտնում ենք, որ փաստաբան Թամարա Մալխասյանը չի կարող կանչվել, որպես վկա հարցաքննության համար, հետևյալ պատճառաբանությամբ.

Թամարա Մալխասյանը հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան (արտոնագիր N 251):

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ **արգելվում է փաստաբանին որպես վկա հարցաքննել այն հանգամանքների վերաբերյալ, որոնք նրան հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու կամ իրեն դիմելու կապակցությամբ**:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ **որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել՝ փաստաբանները՝ պարզելու համար տեղեկություններ, որոնք նրանց կարող են հայտնի լինել կապված իրավաբանական օգնության դիմելու կամ նման օգնություն ցույց տալու հետ**:

ՄԱԿ-ի 8-րդ կոնգրեսի կողմից ընդունված «**Իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»-ի** 22-րդ կետի համաձայն՝ **Կառավարությունները ընդունում և ապահովում են իրավաբանների և նրանց հաճախորդների ցանկացած հարաբերությունների ու խորհրդատվությունների գաղտնի բնույթը՝ նրանց մասնագիտական առնչությունների շրջանակներում**:

Վերոհիշյալ նորմերից հետևում է, որ փաստաբան Թամարա Մալխասյանը չի կարող կանչվել իր վստահորդ Անահիտ Սահակյանին առնչվող քրեական գործով, որպես վկա, քանի որ իր վստահորդի հետ կապված հանգամանքների մասին իր տեղեկությունները ստացվել են իրավաբանական օգնություն ցույց տալու առնչությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խնդիրներից է **պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում**:

Վերոգրյալի հիման վրա և հաշվի առնելով «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջը,

խնդրում եմ՝

- **փաստաբան Թամարա Մալխասյանին, որպես վկա հարցաքննության կանչելու քննիչի պաշտոնակատարի գործողությունը, կանխել։**

Առդիր՝ ծանուցագրի, քրեական գործ հարուցելու մասին որոշման և փաստաբանի արտոնագրի պատճենները։

Հարգանքով՝

ՀՀ փաստաբանների պալատի

նախագահ՝ **Արա Զոհրաբյան**

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })